ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակության կյանքում ու կենցաղում խոշոր դեր խաղացող նյութերից մեկը՝ ապակին մարդն ստեղծել է հեռավոր անցյալում, 5—6 հազար տարի առաջ: Նրա հայտնագործման վայրը դեռևս ստույգ հայտնի չէ: Գիտնականներից ոմանք առաջնությունը տալիս են Եգիպտոսին, մյուսները՝ Առաջավոր Ասիային: Վերջին տեսակետը պաշտպանող գիտնականներից Ֆլինդերս Պետրին, անցյալ դարի վերջերին, ենթադրում էր, թե ապակյա ամենահին առարկաները պատրաստվել են Միջագետքի հյուսիսային շրջաններում կամ, հնարավոր է, Կովկասում, որտեղ ապակու արտադրության կենտրոններն ավելի վաղ են գոյություն ունեցել, քան մյուս երկրներում, այդ թվում նաև Եգիպտոսում: Նրա կարծիքով, Նեղոսի ափերին գտնված ապակյա առարկաները, որոնք վերաբերում են 1-ին դինաստիայի դարաշրջանին (III հազարամյակի սկիզբ) կամ նույնիսկ ավելի վաղ ժամանակներին, ներմուծվել են Ասիայից: Թեև Ֆլինդերս Պետրիի առաջադրած վարկածը պաշտպանություն է գտնում ուսումնասիրողների մի մասի կողմից, սակայն Միջագետքում և Կովկասում հայտնաբերված III—II հազարամյակին պատկանող նյութերի սակավությունը թույլ չի տալիս առաջնությունը տալու այս կամ այն երկրին: Հնարավոր է, որ ապակին հայտնագործվել է իրարից անկախ տարբեր ժողովուրդների մոտ, տարբեր ժամանակներում:

Ապակյա հնագույն հայտնի առարկաները, գլխավորապես ուլունքներ և կնիքներ են, որոնք քարե ուլունքների և կնիքների ընդօրինակությունն են: Դրանք պատրաստվում էին սովորական վառարաններում ցածր ջերմաստիճանի տակ ստացվող ապակու գանգվածից (պաստայից): Ինչ վերաբերում է ապակյա անոթներին, ապա սրանք պատրաստում էին հետևյալ եղանակով. կավի և ավազի խառնուրդից կազմված կաղապարի վրա փաթաթում էին տաք և փափուկ ապակու թելեր, մինչև որ այն ծածկվեր ապակու շերտով, այնուհետև քանիցս տաքացնելով և հղկված քարե սալի վրա գլորելու միջոցով հարթեցվում էր անոթի մակերեսը: Անոթի արտաքինը ձևավորել-մշակելուց հետո, թողնում էին, որ այն սառչի, որից հետո հեռացվում էր կավից ու ավազից կազմված կաղապարմիջուկը: Այս եղանակով պատրաստված անոթների ներսը անհարթ էր լինում: Հաջորդ դարերում տեխնիկայի ընդհանուր վերելքի և ապակեգործության զարգացման պայմաններում ապակու մշակման նոր մեթոդներ առաջ եկան: Արդեն հելլենիստական շրջանում, բարձր ջերմաստիճան ստանալու շնորհիվ, բարելավվեց ապակու բաղադրությունը, որը մոտեցավ այսօրվանին: Ամենակարևոր գյուտը, որը հեղաշրջում առաջացրեց ապակեգործության տեխնիկայի մեջ, փչելու եղանակի հայտնագործումն էր, որը տեղի ունեցավ մեր թվականության նախօրյակին:

Այդ գյուտի ժամանակի և տեղի վերաբերյալ ևս տարակարծություններ կան: Գիտնականների մի մասը նախապատվությունը տալիս է Ալեքսանդրիային, մյուսը՝ սիրիական քաղաքներին:

Բոլոր դեպքերում և Ալեքսանդրիան և Սիրիայի Սիդոն քաղաքը այդ ժամանակա-

շրջանի ապակեգործության ամենախոշոր ու ամենազարգացած կենտրոններն էին, ուստի դժվար է նախապատվություն տալ նրանցից որևէ մեկին: Շատ հնարավոր է, որ մթա. I դարում այդ գյուտն արվել է և Սիրիայում և Եգիպտոսում միաժամանակ կամ ժամանակի ոչ մեծ տարբերությամբ: Տվյալ դեպքում կարևորն այն է, որ վիշելու եղանակը հնարավորություն տվեց բազմազան նոր ու ինքնատիպ ձևեր ստեղծել, անցնել ապակեղենի մասսայական արտադրության, որն իր հերթին իջեցրեց ապակյա առարկաների արժեքը, նպաստեց նրանց տարածմանը:

Հայաստանում առայժմ ապակու ամենահին գյուտերը համարվում են Լճաշենի մթա. II հազարամյակի կեսերին պատկանող դամբարաններից հայտնաբերված ուլունքները, որոնք պահպանվում են Հայաստանի պետական պատմական թանգարանում:

Հայաստանից գտնված վաղ շրջանի ապակու ամենահետաքրքիր օրինակներից են 1953 թ. Կարմիր-բլուրում հայտնաբերված կանացի ֆիգուր պատկերող սկահակի վերին մասը և ալաբաստրոնի վիզը, որոնք, ինչպես պարզված է, հոդոսյան ծագում ունեն: Երկուսն էլ պատրաստված են սնթափանցիկ հարթ ապակուց, առաջինը՝ կավե կաղապարի մեջ, երկրորդը՝ ավազե միջուկի օգնությամբ: Կարմիր բլուրից հայտնի են նաև գանազան ուլունքներ, դրանց թվում նաև այնպիսիները, որոնք պատրաստված են բարձրորակ թափանցիկ ապակուց և հավանաբար միջագետքյան ծագում ունեն: Ապակյա ուլունքներ, կնիքներ և հարմանդներ հայտնաբերվել են նաև Հայաստանի վաղ հայկական (VI—IV դդ. մթա.) և հելլենիստական (III—I դդ. մթա.) դարաշրջանների մի շարք հուշարձաններում. նրանց մի մասը արտադրվել է տեղում:

Հնագիտական հայտնագործումները վկայում են սակայն, որ Հայաստանում ապակյա իրերն ու առարկաները լայն տարածում են ստանում մ. թ. առաջին դարերում:

Հայաստանում հայտնաբերված այդ շրջանի ապակին պատրաստման տեխնիկայի, գույների ու ձևերի բազմազանությամբ մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն Հայաստանի, այլև ընդհանրապես հին աշխարհի ապակեգործության ուսումնասիրության համար:

Հայաստանի հնագիտական հուշարձանների անտիկ ապակուն նվիրված այս պրակում ներկայացված է շուրջ 150 իր, որոնց գերակշռող մասը ապակյա անոթներ են: Առանձին բեկորների տեսքով մեզ հասած սրվակների կողքին հետազոտողն իր տրամադրության տակ ունի մոտավորապես 120—130 ամբողջական կամ միայն մասամբ թերի ապակյա անոթներ:

Այս նշանակալից հավաքածուի ուսումնասիրությունը կարևոր տվյալներ է հայթայթում Հին Հայաստանի և անտիկ աշխարհի ապակեգործության, Հայաստանի այլ երկրների հետ ունեցած առևտրական կապերի մասին: Ներկայացվող ապակեղենը, բացառությամբ երկու նմուշից, որոնցից մեկը բերվել է Մակվից, մյուսը Լեռնային Ղարաբաղից, հայտնաբերվել է Սովետական Հայաստանի տերիտորիայում: Դրա ստվար մասը ի հայտ է եկել Գառնիում 1949 թ. սկսված պեղումների շնորհիվ, անտիկ շրջանի դամբարանադաշտից, ամրոցի կուլտուրական շերտից, ինչպես նաև շինարարական աշխատանքների ժամանակ: Մյուս մեծ խումբը հայտնաբերվել է Վաղարշապատի դամբարաններից 1926—1930 թթ. հետախուզական և 1931—1932 թթ. հատուկ ծրագրով կատարված պեղումների ժամանակ, որոնք ձեռնարկվել էին Հին Վաղարշապատի տեղադրությունը պարզելու նպատակով: Պեղումների շնորհիվ ձեռք բերված նյութերից են Երվանդ Լալայանի կողմից Սևանի ավազանի դամբարաններից հայտնաբերված անոթները: Անոթների և սրվակների մի խումբ էլ գտնվել է պատահաբար շինարարական աշխատանքների ժամանակ, ինչպես օրինակ Սևանի ավազանում՝ Սևան քաղաքից, Քարտի, Վերին Գետաշեն, Ծովինար, Լճաշեն գյուղերից, Թալինի շրջանի Աշնակ գյուղից, Կողբի շրջանից, Աբով-

յանի շրջանի Դելաղիր, Քյուլլուջա գյուղերից. Արտաշատի շրջանի Գետաշեն և Վերին Արտաշատ գյուղերից:

Ինչպես պարզվում է, ապակյա անոթների գերակշռող մասը հայտնաբերվել է դամբարաններից: Այդ հանգամանքը զգալի չափով կանխորոշում է ապակեղենի բնույթը: Դամբարաններում գտնված սրվակները հիմնականում անուշահոտ յուղերի և օծանելիքների, ինչպես նաև մածուկների համար էին օգտագործվում և ննջեցյալի հետ դրվում էին գերեզմանում՝ նրան հանդերձյալ կյանքում ծառայելու համար: Բացառություն կարող են կազմել կոլբայաձև մեծ անոթը և մեկ երկու այլ անոթ (քառանիստներից) որոնք հավանաբար կիրառություն էին գտել տնտեսության մեջ որպես սեղանի սպասք, ջրի կամ որևէ այլ խմիչքի համար:

Հայաստանի անտիկ ապակու հավաքածուն երևան է բերում ձևերի, չափերի և համամասնությունների նկատելի բազմազանություն: Այդ հավաքածուում մենք հանդիպում ենք կոլբայաձև, գնդաձև, ձվաձև, գլանաձև, բազմանիստ անոթների՝ իրենց տարբերակներով: Զևի անհատական առանձնահատկություններով աչքի են ընկնում ամֆորաձև, տանձաձև, արմավի նման, մարդկային դեմք պատկերող անոթները: Ապակյա անոթների զգալի մասը անկանք է, մյուսներն ունեն մեկ կամ երկու կանք:

Գառնիի դամբարաններում հայտնաբերված վեցանիստ անոթի հատակին հունարեն տառերով դրոշմված է «Գերմանոս» անունը: Հատուկ անունների առկայությունը ապակյա անոթների հատակին և պատերին տարածված երևույթ էր անտիկ աշխարհում և նշում էր ապակեգործի, արհեստանոցի կամ անոթի տիրոջ անունը: Հայաստանում գտնված այս անոթի հատակին հավանաբար դրոշմված է պատրաստող արհեստավորի անունը:

Զգալի բազմազանություն է նկատվում անոթների գույների և երանգների մեջ: Հանախ հանդիպող կանաչավուն, երկնագույն սրվակների երանգը պայմանավորված է հումքի՝ ավազի պարունակած բնական խառնուրդներով: Մյուս գույները ստացված են արհեստական ձևով՝ ապակու զանգվածի մեջ մետաղի այս կամ այն թթվուկի (օքսիդ) խառնելու հանապարհով:

Մանուշակագույն հոյակապ անոթները ստացվում են մարգանեցի թթվուկի խառնուրդից, սպիտակ, կաթնագույն անոթները՝ կապարի, արճիճի թթվուկի, մուգ կապույտը՝ կոբալտի խառնուրդի միջոցով: Հայաստանում հանդիպում են կանաչավուն, կապտավուն, դեղնավուն, շագանակագույն, մանուշակագույն ապակիներ իրենց համապատասխան երանգներով: Հանդիպում է նաև անգույն (սպիտակ) ապակի:

Կոլբայաձև սրվակների մեջ գերակշռում է կանաչավուն և երկնագույն երանգը, մյուսների՝ հատկապես կաղապարի օգնությամբ պատրաստված անոթների մեջ շագանակագույնը և մանուշակագույնը:

Հայաստանում հայտնաբերված ապակեղենը մեծ բազմազանություն է երևան բերում նաև պատրաստման տեխնիկայի տեսակետից:

Այդ ապակեղենի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ նրա արտադրման ժամանակ կիրառվել են ապակեգործական տեխնոլոգիայի հիմնական, այն է՝ գլանման, ազատ փչման, կաղապարի մեջ փչման եղանակները, ինչպես և տաք և սառը մշակման տարբեր ձևերը:

Հաստ պատերով, ծանր ու մասսիվ սրվակները, կոպիտ արտաքինով պատրաստված են ոչ թե փչելու եղանակով, այլ ձևավորվել են ձեռքով: Ապակե զանգվածը դեռևս տաք վիճակում հագցվում էր հատուկ ձողի վրա և ապա գլորելու, գլանելու եղանակով ստացվում էր ակնկալած կոլբայաձև սրվակը:

Հայաստանի անտիկ ապակեղենի մեծ մասը ազատ փչելու եղանակով է պատրաստված: Ապակեգործը փչելու խողովակի ծայրով վերցնում էր համապատասխան քանակությամբ ապակյա զանգված, ապա փչելու ու խողովակին տարբեր դիրք տալու ու քարե սալի վրա գլորելու եղանակով ստանում էր ցանկացած ձևը:

Պատրաստվող անոթները հանախ ենթարկվում էին նաև տաք և սառը մշակման: Դեռևս չսառած անոթին փակցվում էր

ինֆնատիպ ձևի՝ հանախ անոթի ամբողջությունը լրացնող կանթը կամ կանթերը, կամ կլոր ոտքը՝ հատակին, երբեմն շուրթը:

Հատուկ ունելիով կամ բռնիչով սեղմվում էր իրանից դեպի վիգը անցման տեղը, որը հատկապես նկատելի է կոլբայանև սրվակների վրա: Հատակին կոտակված ապակուց տաք վիհակում ձգվում էին ոտքեր: Ավելի ուշ ժամանակաշրջանի համար բնորոշ է դառնում վերադիր գոտիներով հարդարելու եղանակը: Թելի նման բարակ կամ ժապավենի նման լայն ապակյա գոտիները դեռևս տաք վիհակում միացվում էին անոթի մակերեսին, կազմելով սպիրալանև, ալիքավոր, ցանցանև և այլ զարդեր: Նման զարդերով անոթների խմբի լավագույն նմուշներից է № 87 թասը, որն իր զուգահեռներն ունի Արևմտյան Եվրոպայի ապակեգործական կենտրոնների արտադրանքի մեջ: Նույն տեխնիկայով պատրաստված սպիրալանև զարդերով սրվակի գեղեցիկ օրինակ է № 89 անոթը, որը հավանաբար ներմուծվել է Սիրիայից: Գոտիները և հարդարվող անոթները հաճախ միևնույն գույնի էին, բայց հանդիպում են նաև այլ գույնի գոտիներ: Իբրև օրինակ կարելի է նշել № 86 գնդանև իրանով սրվակը, որը պատրաստված է անգույն, ոչ շատ բարակ ապակուց, ծածկված է շագանակագույն գիգզագանև զարդերով, որի շնորհիվ ստացվել է երկու գույների գեղեցիկ խաղ: Ժապավենանև գոտիները զարդարվում էին նաև զուգահեռ գծիկներով, որով օձի կերպարանք էին ստանում: Նման գոտիներով զարդարված անոթների վրա երբեմն հանդես էր գալիս օձի գլուխը հիշեցնող գարդ: Այդ պատճառով նման անոթների խումբը հայտնի է օձաժապավենազարդ ապակեղեն անվան տակ: Այս խմբի համար բնորոշ մի օրինակ պետք է համարել № 85 սրվակը: Կահիրեում և Բորիում (Վրաստան) գտնված նման սրվակների հետ միասին այն կրկին անգամ ստիպում է ենթադրել առնել օձաժապավենանև զարդերով սրվակների առաջացման և արտադրման կենտրոնների հարցը:

Տաք մշակման օրինակ կտրող է ծառայել նաև կնմքելու միջոցով՝ ունելիով իրանի պատերի վրա արված ուռուցիկ զարդերի պատրաստումը, ինչպես նաև իրանի կողերի ներհկումը:

Սառը մշակումը կատարվում էր անոթը լրիվ պատրաստելուց հետո, երբ անոթի մակերեսը ենթարկվում էր մեխանիկական ներգործության: Սառը մշակման ձևերն էին փորագրությունը, տաշելը, հղկելը: Առաջինը կատարվում էր ձեռքով՝ փորիչի օգնությամբ: Տաշելը և հղկելը որպես կանոն արվում էր հատուկ հախարակի, անիվի վրա: Դեռևս հելլենիստական շրջանում հայտնի՝ ապակին փորագրելու և հղկելու տեխնիկան լայն տարածում է գտնում հատկապես մթ. II—IV և հաջորդ դարերի ապակեգործության մեջ: Հղկված, տաշած զարդերը, որոնք վաղ ժամանակաշրջանի անոթների վրա ունեն ավելի պարզ բնույթ, ժամանակի ընթացքում դառնում են բազմատեսակ և բարդ, տեխնիկական տեսակետից կատարյալ հմտություն պահանջող:

Հայաստանի տերիտորիայում գտնվել են նման տեխնիկայով մշակված անոթների նմուշներ, հատկապես բեկորներ, սակայն տվյալ խմբի գերազանց մի օրինակ է № 76 սրվակը, պատրաստված կաթնավուն, հաստ ապակուց, որի հղկած ու փորագիր զարդերը է՛լ ավելի են ընդգծում նրա մեծ արժեքը:

Ազակեղենի առանձին խմբերի պատրաստման վայրը որոշելը, ինչպես տեսանք, կապված է բավական մեծ դժվարությունների հետ և միշտ չէ, որ հնարավոր է գոհացուցիչ վերջնական լուծումներ առաջարկել: Նույն դժվարությունները ծագում են նաև հղկած և փորագրած զարդերով անոթների արտադրության կենտրոնները որոշելիս: Այնուամենայնիվ վերոհիշյալ անոթի ինչպես ձևը, այնպես էլ զարդերը զուգահեռներ ունեն Արևմտյան Եվրոպայի ապակեգործական արտադրանքի մեջ և մոտենում են նրա ապակեղենի հոնենոսյան նմուշներին:

Ապակու արտադրությունը շուտով հարստացավ մի կարևոր նորամուծությամբ՝ սկսեցին օգտագործել հատուկ կաղապարներ, որոնց մեջ փչում էին անոթները: Փչման տեխնիկայի այս կատարելագործումը է՛լ ավելի նպաստեց ապակեգործության ծավալմանը. ինչպես և նոր հնարավորու-

թյուններ ընձեռեց անոթների հարդարման համար: Հայաստանում գտնված կաղապարի մեջ փչված անոթների ուսումնասիրումը ցույց է տալիս, որ նրանց պատրաստման ժամանակ կիրառվել են ամբողջական, երկփեղկ և նույնիսկ եռափեղկ կաղապարներ: Ամբողջական կաղապարները հավանաբար փայտյա էին լինում, վերևի մասը լայն, ներքևինը նեղ. պատրաստի անոթը հեշտությամբ դուրս հանելու համար:

Անոթների մեծ մասը պատրաստված է երկփեղկ կաղապարների մեջ: Այդ երևում է մակերեսի վրա եղած, անոթը՝ երկու ավել կամ պակաս հավասար մասի բաժանող ուղղահայաց կարից: Մի անոթի վրա պարզորոշ նշմարվող երեք կարերը ապացույց են, որ այն պատրաստելիս օգտագործվել է եռափեղկ կաղապար:

Հայաստանում գտնված կաղապարի մեջ փչված ապակեղենը աչքի է ընկնում ոչ միայն առանձին անոթների տարբեր ձևերով, այլև կաղապարից նրանց պատերի վրա դրոշմված զարդերի բազմազանությամբ: Այդ ցույց է տալիս, որ օգտագործվել են ամենատարբեր զարդամոտիվներ վերարտադրող կաղապարներ. նրանից հարթ պատեր ունեցող կաղապարների կողքին օգտագործվել են նաև ուռուցիկ զարդեր դրոշմող կաղապարներ: Վերջիններները ներսից ունենում էին փորագիր կամ ներհկված դրոշմամոտիվներ և հորիզոնական ակոսիկներ, գալարաձև և շեղանկյունաձև զարդերից կազմված հորիզոնական գոտիներ, տարբեր ձևի անոթների, շրջանակների ուռուցիկ պատկերներ, կոնաձև ելուստներ և այլն: Անկանոն սրվակի ուռուցիկ իրանի հակադիր կողմերի վրա դրոշմված են կնոջ դեմքը բավականաչափ ցայտուն կերպով վերարտադրող պատկերներ:

Ինչպես արդեն տեսանք, ապակեղենի գերակշռող մասը հայտնաբերվել է դամբարաններում: Այն բոլոր դեպքերում, երբ պահպանվել են դամբարանների ուսումնասիրման հնագիտական կանոնները, ապակյա անոթների թվագրումը նկատելիորեն դյուրին է: Ուղեկցող նյութերը՝ կնիքներ, կավանոթներ, մետաղյա իրեր, հահաի բիշ չափով են կողմնորոշում հետազոտողին ապակեղենի ճիշտ թվագրման հարցում: Այս տեսակետից անհամեմատ մեծ նշանակություն ունեն դրամները, թեև պետք է ասել, որ ապակյա անոթների հետ գտնված դրամների թիվը այնքան էլ մեծ չէ: Այնուամենայնիվ հռոմեական (Օգոստոս, Լուկիոս Վերուս) և սասանյան (Արտաշիր I) դրամների օգնությամբ հնարավոր է առանձնացնել ապակյա անոթներ, որոնք բավականին մեծ նշտությամբ թվագրվում են մ.թ. I, II և III դարերով[1]: Բայց և այնպես, դամբարանային ծագում ունեցող ապակեղենի նշանակալից մասը, կամ Գառնի ամրոցի անտիկ շերտում գտնված բեկորները թվագրվում են մոտավոր նշտությամբ միայն, էլ չենք խոսում պատահական գյուտերի մասին: Հետևապես ապակեղենի ավելի ստույգ թվագրումը մնում է ստանալ բուն իսկ անոթների ուսումնասիրությունից՝ լավ թվագրված ծանոթ նյութերի հետ համեմատության մեջ դնելու հանապարհով: Այդ եղանակով հնարավոր է դառնում Հայաստանի անտիկ ապակեղենը ժամանակագրական ավելի որոշակի տարբերակման ենթարկել ըստ դարերի (մ. թ. I—IV դարեր): Այսպես, մ.թ. I դարով կարելի է թվագրել ազատ փչման եղանակով պատրաստված կոլբայաձև մի շարք սրվակներ, կոլբայաձև փոքր սրվակների մեծ մասը, գնդաձև անոթների մի մասը: Ամենայն որոշակիությամբ նույնպես I դարին են վերաբերում կաղապարի մեջ փչված մի շարք սրվակները, անոթների ուռուցիկ պատկերներով սրվակները, ձվաձև երկկանթանի անոթների (ամֆորիսկների) բոլոր տեսակները, ակոսիկներով գնդաձև անոթների մի մասը, սամֆորաձև անոթը՝ ուղղահայաց ակոսիկներով, ութանիստ երկկանթանի անոթները: Մ.թ. II դարով են թվագրվում ազատ փչման եղանակով պատրաստված գնդաձև անոթները՝ ցածր կլորացող կանթերով, ամֆորա-

[1] *Ճիշտ է, Օգոստոս կայսրի դրամները առանձին դեպքերում հարատևում են մինչև մ. թ. III—IV դարերը, սակայն Գառնիում հայտնաբերված Օգոստոսի դրամներ պարունակող դամբարանների ուսումնասիրությունը, նաև դրանց մեջ հանդիպող ապակյա անոթների դուգահեռները ցույց են տալիս, որ այդ դամբարանները թվագրվում են I կամ առավելապես II դարով։*

օն երկկանթանի անոթները, բասի բեկորը: Կաղապարի մեջ փչված օրինակներից՝ արմավի նման անոթներ, կանացի դեմքերով անոթը, քառանիստ մի կանթանի անոթը:

Մի շարք սրվակներ հնարավոր է լինում թվագրել ավելի ընդհանուր՝ առաջին երկու դարերով, այդ թվում կոլբայանձև սրվակների մեծ մասը, մի շարք գնդանձև իրանով փոքր սրվակները, ներհկված կողերով սրվակների մի մասը: Կաղապարի մեջ փչած սրվակներից մ.թ. I—II դարերով են թվագրվում ձվածիր իրանով երկկանթանի անոթները՝ հորիզոնական ակոսիկներով, լայնացող շուրթերով կաթնագույն թասը և այլն:

Սրոարդ դարին են վերաբերում՝ աղատ փչման եղանակով պատրաստվածներից տանձանձև մեկ անոթը՝ հախարակի վրա տաշված զարդերով, վերադիր ցանցանձև զարդերով թասը: Կաղապարի մեջ փչված անոթներից պետք է հիշատակել վեցանիստ անոթը: Անոթների ավելի ստվար խումբ հնարավոր է թվագրել նույնպես ընդհանուր ձևով II—III դարերով. օրինակ. երկարավիզ սրվակը, փոքրագիր զարդերով գնդանձև երկկանթանի անոթները, ներհկված կողերով մեկ կանթանի անոթը, վերադիր զարդերով մի քանի անոթներ: Կաղապարի մեջ են փչված այս նույն դարերին պատկանող կոնանձև ուռուցիկ զարդերով գնդանձև սրվակները. գլանանձև սրվակը:

Մ.թ. III—IV դարերով կարելի է թվագրել փոքրագիր գոտիներով գնդանձև մեծ անոթը, ներհկված կողերով սրվակները, վերադիր զարդով մեկ կանթանի սրվակը, կնմթելու միջոցով արված ուռուցիկ զարդեր ունեցող անոթները, տանձանձև կարճավիզ սրվակը: Նույն ժամանակի՝ կաղապարի մեջ փչվածներից են կոնանձև ելուստներով հարդարված տանձանձև անոթի բեկորները, գնդանձև ուղղահայաց ակոսներով անկանթ անոթները: Վերջապես IV դարով և V դարի սկզբով են թվագրվում հղկված զարդերով անոթի բեկորները, գնդանձև իրանով՝ դեպի վեր լայնացող վզով սրվակները: Կաղապարի մեջ է փչված տանձանձև իրանով, ուղղահայաց ակոսներով անոթը, որը նույնպես այս ժամանակաշրջանին է վերաբերվում:

Հայաստանում հայտնաբերված անտիկ ժամանակաշրջանի ապակեղենի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն մեծ մասամբ ներմուծված է, ընդ որում պարզվում են նաև նրա արտադրության հիմնական կենտրոնները: Միաժամանակ այն թույլ է տալիս խոսելու տեղական ապակեգործության առաջին նմուշների մասին: Ինչպես թվագրման հարցը որոշելիս, այստեղ ևս ուսումնասիրման հիմնական մեթոդը զուգահեռներն են ու համեմատությունները:

Հայաստանում մինչև օրս դեռ չեն հայտնաբերվել անտիկ ժամանակաշրջանի ապակեգործական արհեստանոցներ, թեպետ նրանց գոյության մասին եղած առաջին տվյալները անուղղակիորեն կարելի է քաղել պրակում ուսումնասիրման նյութ դարձած իրերից: Հին կամ հելլենիստական դարաշրջանում սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման համեմատաբար բարձր մակարդակի հասած Հայաստանը, իր աշխի ընկնող քաղաքային կյանքով, արհեստներով ու առևտրով, անկասկած նյութական և տեխնիկական բոլոր հնարավորություններն ուներ ապակեղենի արտադրությունը տեղում կազմակերպելու համար: Դրան նպաստում էին նաև Հայաստանի տարբեր վայրերում առկա կվարցիտային ավազները, որոնք, ինչպես հայտնի է, ապակեգործության հիմնական հումքն են: Հայաստանում գտնված մի շարք սրվակների համեմատական ուսումնասիրությունը ամենայն ակնհայտությամբ ցույց է տալիս նրանց տարբերությունը անտիկ աշխարհի նույնատիպ անոթներից: Հայաստանի տերիտորիայում հայտնաբերված մի շարք անոթների տարբերիչ գծերը հիմք են տալիս դրանք տեղական արտադրանքի արգասիք համարելու: Այդ հավասար չափով վերաբերվում է ինչպես ազատ փչման եղանակով, այնպես էլ կաղապարի օգնությամբ պատրաստված սրվակներին (կոլբայանձև սրվակներ ձվանձև իրանով, ներհկված կողերով մի շարք անոթներ, ուղղահայաց ակոսներով գնդանձև կարճավիզ անոթներ և այլն): Ուրանիստ սրվակը, որի պատրաստումը ապակեգործին լավ չի հաջողվել և փաստորեն արտա-

դրական խոտան է, դժվար թե դրսից ներմուծված լինեն: Հայաստանում և մասամբ Անդրկովկասում գտնվել են ձվաձև ամֆորիսկներ, որոնց իրանի մեջտեղով անցնող հորիզոնական գոտին զարդարված է շեղանկյուններով: Այս ամֆորիսկները, սիրիական հանրահայտ և Հայաստանում նույնպես տարածում գտած նույնատիպ անոթների ընդօրինակությունն են:

Հայաստանից և Անդրկովկասից դուրս շեղանկյունիներով նման անոթ գտնվել է մեկ հատ, այն էլ Սիրիայում: Բացառված չէ, ուրեմն, որ այս տիպի անոթներ արտադրվել են նաև Հայաստանում:

Տեղական տպակեղենին կարելի է վերագրել նաև ներկված կողերով մի շարք անոթներ, առանձին սրվակներ, ձվաձև իրանով կոլբայաձև սրվակներ, ուղղահայաց ակոսիկներով գնդաձև անոթներ և այլն: Հայաստանի տարբեր վայրերում հայտնաբերված ձվաձև իրանով, ինքնատիպ ձևի կոլբայաձև սրվակները (№ № 43—56) փոքր տարողություն ունեն, ընդհանուր ձևերով ու չափերով քիչ են տարբերվում միմյանցից, բնորոշ գույնը կանաչավունն է: Այս սրվակների տարածման շրջանակները դուրս չեն գալիս Անդրկովկասից, սակայն Հայաստանում հայտնաբերվածներն առանձին գծերով տարբերվում են Վրաստանում և Ադրբեջանի այժմյան տերիտորիայում գտնվածներից: Գնդաձև իրանով, ուղղահայաց ակոսիկներով և կաղապարի մեջ փչելու եղանակով պատրաստված փոքր սրվակներին, որոնց մեծ մասը հայտնաբերվել է Վաղարշապատում, բնորոշ է բաց կանաչավուն գույնը (№ № 136—145): Սրանք ևս ընդհանուր առմամբ նման են և չնայած ձևի, վզերի ու պսակների միջև եղած որոշ տարբերություններին, կազմում են մի ինքնատիպ և հավանաբար տեղական խումբ:

Հայաստանում ապակու արտադրության կազմակերպումը բացառված չէր և հավանաբար այն առնչվում էր Սիրիայի հետ, մանավանդ, որ Հայաստանի կապերը այդ երկրի հետ հայտնի են հնուց ի վեր և ավելի սերտացան Տիգրան Մեծի ժամանակներից սկսած:

Անտիկ աշխարհում եղել են ապակեպործ շրջիկ վարպետներ, որոնք ապակու արտադրություն են կազմակերպել տարբեր երկրներում, ուր դրա համար պայմաններ կային: Հայտնի է, որ էնեոնը՝ հին աշխարհի հռչակավոր ապակեգործը իր արհեստանոցի բաժանմունքներն է ունեցել զանազան վայրերում, իսկ կյանքի վերջին տարիներին բոլոր արհեստանոցները տեղափոխել է կայսրության մայրաքաղաք: Շատ հնարավոր է, որ սիրիական ապակեգործ վարպետներից մի քանիսը հաստատված լինեն նաև Հայաստանում:

Հայաստանը մ. թ. առաջին դարերում Առաջավոր Ասիայի տնտեսապես զարգացած երկրներից մեկն էր, ուստի չէր կարող չունենալ արտադրության այնպիսի մի կարևոր ճյուղ, ինչպիսին ապակեգործությունն էր: Դեռևս մթա I դ., Տիգրան Մեծի օրոք, հելլենիստական մի շարք երկրների թվում նվաճվեցին նաև Սիրիան, Փյունիկիան, որոնք ապակեգործության խոշոր կենտրոններ էին: Սելևկյանների մայրաքաղաք Անտիոքը, Սիրիայի ամենակարևոր առևտրական կենտրոնը մի պահ դարձավ Տիգրանի գահանիստ քաղաքներից մեկը: Բացի այդ, Տիգրանը և նրա հաջորդ Արտավազդ II-ը հելլենիստական քաղաքներից մեծ թվով մարդիկ տեղափոխեցին Հայաստան՝ իրենց խոշոր քաղաքներում բնակեցնելու համար: Հնում առևտրականներին և արհեստավորներին նախապատվություն էր տրվում: Հայտնի է, որ քաղաքներում տեղավորված այս գաղթականները մեծ դեր էին խաղում Հայաստանում որպես առևտրականներ ու որակյալ արհեստավորներ: Հավանաբար նրանք ևս, ինչպես ընդունված էր Պոնտոսի, Կապադովկիայի կամ Պարթևական թագավորության մեջ, օգտվել են հատուկ իրավունքներից ու արտոնություններից:

Ի վերջո շատ կարևոր է հիշատակել վաղ միջնադարյան պատմիչ Ագաթանգեղոսի վկայությունն այն մասին, որ Վաղարշապատում III դարի վերջերին գոյություն ուներ ապակեգործական արհեստանոց:

Այս ամենով հանդերձ, միանգամայն որոշակի կարելի է ասել, որ Հայաստանի անտիկ ապակու մեծ մասը ներմուծվել է:

Այդ ապակու ուսումնասիրությունը, անտարակույս, ցույց է տալիս, որ Հայաստանին ապակեղեն մատակարարողը գերազանցապես Սիրիան էր, Սիրիայի ապակեգործական կենտրոնները: Այդ հանգամանքը պատահական չպետք է համարել, քանի որ Սիրիան, Փյունիկիայով հանդերձ, անտիկ աշխարհի ապակեգործության սմենանոշակավոր կենտրոններից մեկն էր: Ամենայն հավանականությամբ, այստեղ, գուցե և Եգիպտոսում, երևան եկան ապակեգործության տեխնոլոգիայի մեջ հեղաշրջում կատարող երկու մեծ հայտնագործությունները՝ ագատ փչելու և կաղապարի մեջ փչելու եղանակով ապակեղենի պատրաստումը: Այս հայտնագործությունները ապակեգործությունը խիստ անձուկ շրջանակներից դուրս բերեցին մասսայական արտադրության հանապարհ: Սիրիական ապակին սկսեց ողողել աշխարհը: Հայաստանում հայտնաբերված ապակեղենի մի շարք նմուշների ընդհանուր ձևերի և զարդերի համարյա կատարյալ նմանությունները Սիդոնում, Դուրա-Եվրոպոսում և սիրիական այլ կենտրոններում արտադրված անոթների հետ տարակույս չեն թողնում նրանց սիրիական ծագման վերաբերյալ:

Հայաստանում հայտնաբերված սիրիական ապակեգործության առավել ցայտուն նմուշները՝ կաղապարի օգնությամբ արտադրվող սիդոնյան բնորոշ սրվակները, անտիկ աշխարհի հայտնի ապակեգործ էնեոնի միջավայրում պատրաստած սմֆորիսկները, ուղղահայաց ակոսիկներով գնդաձև մի կանթանի անոթները թե՛ քանակով և թե՛ կատարման արվեստով կարող են անտիկ ապակու լավագույն հավաքածուների զարդը կազմել:

Սիրիական ապակեգործության օրինակով նոր կենտրոններ ստեղծվեցին նաև մի շարք այլ վայրերում: Արդեն գործող եգիպտական արհեստանոցների կողքին այդպիսիները հանդես եկան Կիպրոսում, Իտալիայում, Գալլիայում, հռենոսյան մարզում:

Հայաստանի հին ապակու մի քանի օրինակներ վկայում են, որ նրանց ծագման հավանական վայրերը եղել են՝ Եգիպտոսն ու Կիպրոսը, բեպետ նրանք, անկասկած Հայաստան են բերվել սիրիական ապակու հետ միասին: Երկու առաջնակարգ անոթ իրենց մի շարք առանձնահատկություններով կարծես թե կապվում են հռենոսյան շրջանի ապակեգործական արտադրանքի հետ, բայց նրանց Հայաստան բերվելու, ներմուծվելու հանգամանքները և հանգամանքները դեռևս կարոտ են լուսաբանության:

Մեծ քանակությամբ սիրիական ապակու հայտնաբերումը Հայաստանի հին ամրոցներում, անգամ գյուղական բնակավայրերում և մոտ ապագայում նաև քաղաքներում, միանգամայն բնորոշ և ուշագրավ է, քանի որ անդրադարձնում է հայ-սիրիական տնտեսական և մշակութային կապերը, որոնք բավականաչափ սերտ էին ոչ միայն հին կամ անտիկ դարաշրջանում, այլև վաղ միջնադարում: